ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.04.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/38

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) քննելով «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ-ի կողմից 18.03.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **<u>«ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 18.03.2019թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«Բողոքի նախապատմությունը և փաստերը.

ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետև նաև՝ Պատվիրատու) կարիքների համար դերձակի ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ):

Վերոհիշյալ ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն:

Սահմանված ժամկետում www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային հայտ է ներկայացրել «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն՝ կից ներկայացնելով

համապատասխան փաստաթղթեր, որի վերաբերյալ ստացել է ծանուցում, որ բեռնումն հաջողությամբ իրականացվել է:

Սակայն 08.02.2019թ. հայտերի բացման նիստում գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հայտում փաստաթղթերը կցված չեն եղել և գնահատող հանձնաժողովը գնահատելու հնարավորություն չի ունեցել:

Անհրաժեշտ է նշել, որ մուտք գործելով www.armeps.am կայք և ուսումնասիրելով վերը նշված ծածկագրով ընթացակարգի կարգավիճակը, նկատելի է այն հանգամանքը, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի անվան կողքին «հայտ» անվանումով սյունակում առկա է ZIP ֆայլ, որը ներբեռնելուց հետո պարզվում է, որ վերոհիշյալ ֆայլը դատարկ է, այսինքն հայտում բացակայում են կցված փաստաթղթերը:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն համակարգի ոչ լիարժեք, թերի աշխատելու պատճառով զրկվել է իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից:

Ավելին, նման պայմաններում Պատվիրատուն կարող է կնքել պայմանագիր ավելի բարձր գին առաջարկած մասնակցի հետ, ինչը էական վնաս կպատճառի բյուջեին և կհանդիսանա բյուջեի միջոցների անհիմն վատնում:

Նման փաստական հանգամանքների պայմաններում, գտնում ենք, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հանդերձանքի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետով սահմանված պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը, ինչն էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով

երաշխավորված՝ մասնակցի մասնակցության իրավունքի իրականացման սահմանափակմանը կամ ոչ լիարժեք իրականացմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման...:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում եմ՝ չկայացած հայտարարել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար հանդերձանքի ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով բաց մրցույթը»:

ի լրումն 18.03.2019թ. ներկայացրած բողոքին, «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն 27.03.2019թ. հայտնել է հետևյալ նկատառումները.

««Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով բաց մրցույթին:

Սակայն, ARMEPS համակարգում հայտը բեռնելուց հետո տեղի ունեցած հայտերի բացման նիստում «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից չի գնահատվել այն հիմքով, որ ARMEPS համակարգով «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հայտը բեռնելիս՝ փաստաթղթեր կցված չեն եղել:

Ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն հանգամանքի վրա, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով բաց մրցույթով «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից հայտի ամբողջ փաթեթը բեռնվել է ARMEPS համակարգ, ինչի մասին փաստում է նաև այն հանգամանքը, որ ARMEPS համակարգում բեռնված «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» հայտի ամբողջ ֆայլի ծավալը կազմում է 2,2 մեգաբայթ, հետևաբար դատարկ ֆայլը չէր կարող իր ծավալով կազմեր 2,2 մեգաբայթ:

Հիմք ընդունելով վերոնշյալ հանգամանքը՝ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից 26.03.2019թ. հարցում է ներկայացվել ՀՀ ֆինանսների նախարարություն, որով

խնդրել ենք հայտնել, արդյո՞ք առկա է «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի մեղքը, թե՝ խնդիրը կապված է ARMEPS համակարգի հետ:

Ելնելով վերոգրյալից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք թիվ ԳԲՔԱ-ԷՍ-2019/38 բողոքի վերաբերյալ հաջորդ նիստ կամ որոշման հրապարակման նիստ նշանակել այն հաշվարկով, որ ստացված լինի ՀՀ ֆինանսների նախարարության պատասխանը, քանզի վերջինս էական նշանակություն ունի գործի ելքի համար»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Արթուր Պարանյանը:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ-ի կողմից 18.03.2019թ. Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքի վերաբերյալ 29.03.2019թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«08.02.2019թ. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստում պարզվել է, որ «Մասիսի Գարուն ԿՖ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած էլեկտրոնային հայտում ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) ոչ մի փաստաթուղթ կցված չէ: Ուստի գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Մասիսի Գարուն ԿՖ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտը մերժվել է»:

Պատվիրատուն պատշաճ ծանուցվել է Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն չի ապահովել իր լիազորված ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ԳԲՔԱ-ԷՍ-2019/38 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ-ի կողմից 18.03.2019թ. ներկայացված բողոքը, բողոքի լրացումը և կից փաստաթղթերը, ՀՀ պաշտպանության նախարարության 18.03.2019թ. թիվ ՊՆ/02/106-2019 գրությամբ հայտնած դիրքորոշումը, «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով բաց մրցույթի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով բաց մրցույթի գնահատող

հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 08.02.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությունը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դերձակի ծառայությունների ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ): Մրցույթին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ-ն:

Հանձնաժողովի 08.02.2019թ. նիստի թիվ 3 արձանագրության 2.2 կետի համաձայն՝ մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերն առկա են, բացառությամբ «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված էլեկտրոնային հայտում ոչ մի փաստաթուղթ կցված չէ: Ուստի գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացված բողոքով հայտնել է, որ Ընկերությունը Հրավերով սահմանված ժամկետում www.armeps.am էլեկտրոնային համակարգի միջոցով հայտ է ներկայացրել, կից ներկայացնելով նաև պահանջվող փաստաթղթերը, ինչի վերաբերյալ համակարգից ստացել է ծանուցում, որ բեռնումը հաջողությամբ իրականացվել է: Սակայն, 08.02.2019թ. հայտերի բացման նիստում Հանձնաժողովն արձանագրել է, որ «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ-ի հայտում փաստաթղթերն առկա չեն եղել և գնահատող հանձնաժողովը գնահատելու հնարավորություն չի ունեցել: ԸՆնկերությունը բողոքով նշել էր նաև, որ www.armeps.am համակարգի «Ընթացակարգի կարգավիճակը» ուսումնասիրությունը ցույց է տվել, որ «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ-ի անվան կողքին գտնվող «հայտ»-երի սյունյակում առկա է ZIP ֆայլ, որը ներբեռնելուց հետո պարզվում է, որ հիշյալ ֆայլը դատարկ է, այսինքն, Ընկերության կողմից ներկայացված հայտում բացակայում են կցված փաստաթղթերը:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստին բողոքաբերը պնդեց, որ վերը նշված իրավիճակը ստեղծման պատճառը եղել է էլեկտրոնային գնումների համակարգի խափանումը, դրա ոչ լիարժեք, թերի աշխատանքը, ինչի արդյունքում Ընկերությունն ըստ էության զրկվել է Ընթացակարգին մասնակցելու իր իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից:

Ընկերության ներկայացուցիչը Բողոքներ քննող անձին ներկայացրեց Ընկերության կողմից 26.03.2019թ. ՀՀ ֆինանսների նախարարություն մուտք արած հարցման պատճենը, որով Ընկերությունը հայտնել է հետևյալը.

««Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով բաց մրցույթին:

Սակայն, ARMEPS համակարգում հայտը բեռնելուց հետո տեղի ունեցած հայտերի բացման նիստում «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից չի գնահատվել այն հիմքով, որ ARMEPS համակարգով «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի հայտը բեռնելիս՝ փաստաթղթեր կցված չեն եղել:

Ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն հանգամանքի վրա, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/4» ծածկագրով բաց մրցույթով «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից հայտի ամբողջ փաթեթը բեռնվել է ARMEPS համակարգ, ինչի մասին փաստում է նաև այն հանգամանքը, որ ARMEPS համակարգում բեռնված «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» հայտի ամբողջ ֆայլի ծավալը կազմում է 2,2 մեգաբայթ, հետևաբար դատարկ ֆայլը չէր կարող իր ծավալով կազմեր 2,2 մեգաբայթ:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ հանձնարարել համապատասխան ստորաբաժանմանը հայտնել, այս պարագայում, երբ «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի կողմից բեռնվել է ամբողջ ֆայլը, սակայն անհասկանալի պայմաններում ARMEPS համակարգից ներբեռնելիս ֆայլը ցույց է տալիս որպես առանց կցված փաստաթղթերի ֆայլ՝ սակայն 2,2 մեգաբայթ ծավալով, արդյոք առկա է «Մասիսի Գարուն կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ի մեղքը, թե՝ խնդիրը կապված է ARMEPS համակարգի հետ»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 8-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Էլեկտրոնային ձևով հաղորդակցության համար օգտագործվելիք միջոցները պետք է լինեն ոչ խտրական, ընդհանուր առմամբ մատչելի լինեն հնարավոր ցանկացած մասնակցի և փոխգործակցող տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների ընդհանուր օգտագործման միջոցների հետ:

Օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացի կարգավորման և համակարգման աշխատանքների կազմակերպման նպատակով լիազորված մարմինն իրականացնում է էլեկտրոնային գնումների համակարգի սպասարկման և համակարգման գործառույթները:

ՀՀ կառավարության 06.04.2017թ. N 386-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի 3-րդ համաձայն՝ էլեկտրոնային ձևով գնումների կատարման դեպքում գործում են գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները՝ հաշվի առնելով նույն կարգով սահմանված առանձնահատկությունները:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտում հրավերով նախատեսված փաստաթղթերը կցված չեն եղել:

- Հանձնաժողովի որոշմամբ «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ վերջինիս էլեկտրոնային հայտում հրավերով նախատեսված փաստաթղթերը կցված չեն եղել:

- armeps համակարգում առկա տեղեկատվության ուսումնասիրությունը ցույց է տվել, որ «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հայտը ներբեռնելիս՝ ներբեռնվում է դատարկ «ZIP» ֆայլ:

- Ընկերությունը 26.03.2019թ. հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարություն խնդրելով հայտնել, թե ստեղծված իրավիճակում առկա է արդյոք «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ-ի մեղքը, թե՝ խնդիրը կապված է ARMEPS համակարգի ոչ պատշաճ ախատանքի հետ:

- ՀՀ ֆինանսների նախարարության կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Նկատի ունենալով, որ «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ-ի կողմից չներկայացվեց որևէ ապացույց այն մասին, որ Ընկերության կողմից սահմանված կարգով Հրավերով նախատեսված փաստաթղթերը չներկայացնելու պատճառ է հանդիսացել էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի խափանումը, Բողոքներ քննող անձը գտնում է, որ «ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ-ի կողմից բողոքով ներկայացված փաստական հանգամանքները բավարար հիմք չեն տալիս հավաստելու, որ Ընկերության կողմից հայտի ներբեռնման ձախողումը էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի ծրագրային սխալի արդյունք է:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«ՄԱՍԻՍԻ ԳԱՐՈՒՆ ԿԱՐԻ ՖԱԲՐԻԿԱ» ՍՊԸ-ի 18.03.2019թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ